

# ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆԵՔ
# Ի ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ուրախությամբ հայտնում ենք մեր ողջ հայ ժողովրդին, որ առաջիկա սեպտեմբեր ամսի 8-ին (1996) Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը կատարելու է Իր առաջին Մյուռոնօրհնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Հանուն Վեհափառ Հոր կոչ ենք անում մեր ժողովրդին Մայր Հայաստանում և արտասահմանում, որ հոգեպես պատրաստվեն այդ հոգեպարար մեծ արարողության համար և ներկա գտնվեն որպես հավատավոր և հավատարիմ ուխտավորներ և կորանան Ս. Հոգու շնորհների կենարար ներգործությամբ:

***ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

*Ս. Էջմիածին,*
*12 մարտի 1996 թ.*

# ՎԱՉԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՇՔԱՆՇԱՆՈՎ



Կիրակի օրը, Մարտի 17-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վեհարանի դահլիճում տեղի ունեցավ Վաչէ Մանուկյանի /Լոնդոն, Մեծ Բրիտանիա/ մեծարման հանդիսությունը՝ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ:

Հոգևորական դասից՝ արքեպիսկոպոսներից, եպիսկոպոսներից և վարդապետներից բացի, ներկա էին նաև Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Ֆինանսների, Ներքին գործոց, Ազգային անվտանգության և Պաշտպանության նախարարները, Ռուսաստանի Դաշնության, Մեծ Բրիտանիո, ԱՄՆ, Գերմանիո, Ցունաստանի, Չինաստանի և Եգիպտոսի դեսպանները, Երեւան քաղաքի նախկին և ներկայ քաղաքապետները, Կենտրոնական բանկի նախագահը, նորաբաց Միդլենդ Արմենիա բանկի կառավարիչ մարմնի անդամները և տնօրենը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ և այլ հրավիրյալներ, որոնց թվում էին Պրն. Վաչե Մանուկյանի եղբայրները և ընտանիքի անդամները, որոնք Լոնդոնից Հայաստան էին ժամանել՝ մասնակցելու Միդլենդ Արմենիա բանկի բացման արարողությանը, որի հիմնադրման գործում մեծ դեր ուներ Պրն. Վաչե Մանուկյանը:

Գերմանիո Խորհրդարանի փոխնախագահ Հանս Քլայնը՝ իրեն ուղեկցող պատվիրակության հետ, որոնք պաշտոնական այցով



ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

գտնվում էին Հայաստանում, նույն առաւոտյան այցելություն տվեցին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսին և մասնակիցը դարձան հանդիսության:

Վեհափառ Հայրապետը իր խոսքում բարձրորեն գնահատեց Վաչե Մանուկյանի նվիրվածությունը իր Մայր Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, իր ժողովրդին եւ նորանկախ Հայրենիքին եւ նրա տնտեսական պայմանների բարելավմանը, մշակույթի և երիտասարդության կրթության աջակցությանը: Վեհափառ Հայրապետը ավելացրեց, որ Վաչե Մանուկյանը նաև Ս. Էջմիածնի առաջին բարերարն էր՝ Նորին Սրբության Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց և գահակալությունից հետո:

Այդ առթիվ էր որ պրն. Վաչե Մանուկյանը նվիրաբերեց 1 մլն. տոլար հիմնադրելով Վաչե Մանուկյան հիմնադրամը, որի տարեկան եկամուտը պետք է օգտագործվի Մայր Աթոռի հոգևոր կրթական և մշակութային գործունեության համար: Նորին Սրբությունը ամփոփելով ասաց. «Խոսելով պրն. Վաչե Մանուկյանի անգնահատելի ներդրումների և բարեգործության մասին՝ Մեծ Բրիտանիայում, Լիբանանում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Մայր Հայրենիքում, ես երջանիկ եմ այսօր շնորհելու ձեզ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ շքանշանը՝ Հայաստանյայց եկեղեցու բարձրագույն

պարգևը: Թող Աստուած պարգևի Ձեզ և Ձեր ընտանիքի բոլոր անդամներին երկար տարիների կյանք, քաջառողջություն, մշտատև երջանկություն և բազմաբեղուն հաջողություններ»:

Այնուհետև Արտակ աբեղա Տիգրանյանը հանդիսավորությամբ կարդաց Նորին Սրբության կոնդակը՝ գրի առնված հայկական մանրանկարչության դասական ոճով:

Խորապես հուզված այս մեծարումից՝ պրն. Վաչե Մանուկյանը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբութեանը՝ իր անձնական բարեկամին, որը կարևոր դեր է խաղացել Վ. Մանուկյանի՝ եկեղեցուն և հարազատ ժողովրդին նվիրվելու գործում: Այնուհետև նա ավելացրեց որ իր համոզումով յուրաքանչյուր հայ պարտավոր է իր մասն ունենալ եկեղեցուն, իր ժողովրդին, իր անկախ հայրենիքին նվիրաբերվելու գործում թէ Մայր Հայաստանում, թէ սփյուռքում:

Ընդունելության ընթացքում որը հետևեց հանդիսությանը, ներկա հյուրերը ջերմորեն շնորհավորեցին պրն. Վաչե Մանուկյանին և արտահայտեցին իրենց ուրախությունն ու գնահատանքը:

Այնուհետւ Նորին Սրբության կողմից տրվեց ճաշ ի պատիվ Մանուկյան ընտանիքի և հյուրերի:

# ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ
# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
# ՏԻԱՐ ՎԱԶԷ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ
## ՈՐ Ի ԼՈՆՏՈՆ, Ի ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

Մեզի համար ուրախութիւն է եղած Ձեզ անձամբ ճանչնալ բազում տարիներէ ի վեր: Քաջատեղեակ ենք այն սքանչելի ոգիին եւ անհուն սիրոյն, որով Դուք ձեր անհատական եւ ընտանեկան կեանքը շաղախեցիք, եւ կը շարունակէք առաւելով միախառնել, Մեր հայ ազգին, Հայց. Եկեղեցիին եւ Մայր Հայրենիքին համայնական կեանքին հետ:

Աստուածատուր Ձեր շնորհներով եւ ջանքով, ու աշխոյժ եւ յառաջադէմ կեանքով ու գործով Դուք ձեռքբերեցիք բարձրագոյն աստիճանի բարեկեցիկ պայմաններ Ձեզի եւ Ձեր ընտանիքին համար: Ձեր այս երիտասարդ տարիքին եղաք արդէն աշխարհի չափանիշներով տնտեսական մեծ նուաճումներու մարդ եւ ամենուրեք պատիւ բերիք Ձեր ազգի անունին:

Դուք իմաստութիւնը եւ քաջութիւնը ունեցաք Ձեր արդար վաստակէն բաժին հանելու Ձեզ ծնող ազգին եւ եկեղեցիին: Թէ սփիւռքի տարածքին, Լոնտոնէն մինչեւ Լիբանան ու Միացեալ Նահանգներ, եւ թէ Ձեր Մայր Հայրենիքին՝ վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութեան եւ ժողովուրդին ու անոր տնտեսական վերելքին ընծայեցիք Ձեր լիառատ եւ անխտրական օժանդակութիւնը օրինակելի նուիրուածութեամբ:

Մեր Կաթողիկոսական օրհնութեան եւ գոհունակութեան առիթով, Ձեր որդիաբար ու առատաձեռն նուիրատուութեամբ հանդիսացաք առաջին մեծ բարերարը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ՝ Սրբոյ Էջմիածնի, հաստատելով՝ ՎԱԶԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ որպէս նիւթական միջոցն աջակից Մայր Աթոռոյ հոգեւոր, կրթական եւ մշակութային գործունէութեան:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ մեծագործ բարերարութեանց այսու Հայրապետական այսու Կոնդակաւ Ձեզ կը շնորհենք Մայր Աթոռոյս բարձրագոյն շքանշանը կնքուած սրբաշունչ անուամբ

# ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած որ Ձեզ, Ձեր նուիրեալ Տիկնոջ՝ Թամարին, Ձեր զաւակներուն, Ձեր մօր և եղբայրներուն և Մանուկեան ընտանիքի բոլոր անդամներուն պարգևէ երջանկալից կեանքի բոլոր բարիքները, տալով Ձեզ ըստ Ս. Աւետարանի խօսքին. «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր» /ՄԱՐԿ. Դ. 20/:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Տուաւ կոնդակս ի 1 7 ն Մարտի*
*Յամի Տեառն 1996, և ի թուին Հայոց ՌՆԽԵ*
*ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի*
*Ընդ համարաւ Է/26*